ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի մարտի 17-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ <<ՍԱՊ-ԳՀԱՊՁԲ-18/01>>

ՀՀ բնապահպանության նախարարության <<Սևան>>ազգային պարկ>>ՊՈԱԿ-ի կարիքների համար «Վառելիքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՍԱՊ-ԳՀԱՊՁԲ-18/01>>ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2018 թվականի մարտի 16-ին Ժամը՝ 17:30 և 10:40 ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2018 թվականի մարտի 17-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վառելիքի միջազգային շուկայում գները հաճախակի աննախադեպ տատանվում են, ուստի մասնակիցն առաջարկում է, որ կարող է գնառաջարկ ներկայացնել և մասնակցել մրցույթին միայն 2018թ. Երկրորդ եռամսյակի համար:

Պարզաբանում N 1: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև «ՍԱՊ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով հրավերի 1 -ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված պարզաբանման հարցումները դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

Հարցադրում N 2: <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կողից հայտարարված <<ՍԱՊ-ԳՀԱՊՁԲ-18/01>>ծածկագրով հրավերի Հավելված 7-ում ներկայացված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր – գնման և վճարման ժամանակացույցերը, որտեղ ապրանքի գնումը և մատակարարումը ամբողջ 2018 թվականի համար է նախատեսված, մասնակիցը հարկ է համարում պարզաբանել, թե արդյո՞ք հնարավորություն ունի գնային առաջարկ ներկայացնել միայն 2018 թվականի առաջին եռամսյակի համար: Հաշվի առնելով վառելիքի շուկայում առկա գների անկայունությունը՝ մասնակիցը տեղեկացնում է, որ հակառակ դեպքում հայտ չի ներկայացնի:

Պարզաբանում N 2: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև «ՍԱՊ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով հրավերի 1 -ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված պարզաբանման հարցումները դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել <<ՍԱՊ-ԳՀԱՊՁԲ-18/01>>ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝**Ա. Հովհաննիսյանին**:

Հեռախոս՝ (0261)2 13 38
Էլեկտրանային փոստ՝ sevanap@inbox.ru